ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

<<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար տրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգման՝ տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված **<<ԾԿՏ-ԳՀԾՁԲ-21/1>>** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2021 թվականի հունվարի 20-ին** կնքված N **<<ԾԿՏ-ԳՀԾՁԲ-21/1>>** պայմանագրում **2021 թվականի փետրվարի 01-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ ծառայությունների մատուցումն իրականացվելու է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու և կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքվելու դեպքում:

Փոփոխության նկարագրություն: Ծառայությունների մատուցումն իրականացվելու նպատակով նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ և կողմերի միջև կնքվել է համապատասխան համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Համապատասխան ֆինանսական միջոցների առկայություն, Պայմանագրի 7.5 և 7.15 կետեր :

Պատվիրատու՝ <<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ